Luys Lույս®

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԻՆԴԵՔՍ – 2022

Հաշվետվություն «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» միջազգային կազմակերպության կողմից հրապարակված զեկույցի (2022թ.) հիման վրա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 1

1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 3

2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՈՒՄՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ 5

3. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 7

4. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ 9

ԱՄՓՈՓՈՒՄ 12

ՆԱԽԱԲԱՆ

Երկրների զարգացման առաջնային խոչընդոտներից մեկը կոռուպցիան է: Այն ունի ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական, սոցիալական և մշակութային բացասական հետևանքներ: Դրանց թվում առանձնանում են տնտեսական կորուստները, աղքատության ու հասարակության բևեռացվածության խորացումը (և՛ տնտեսական, և՛ սոցիալական առումով), մարդու իրավունքների ոտնահարումները և այլն:

Բացի այն, որ կոռուպցիան խիստ բացասաբար է ազդում առանձին վերցրած երկրի վրա, այն նաև սպառնալիք է ընդհանուր համաշխարհային անվտանգության տեսանկյունից և պահանջում է բոլոր երկրների ջանքերի համախմբում և ներդաշնակեցված գործունեություն:

Ներկայիս բարդ միջավայրում կոռուպցիայի դեմ պայքարը, թափանցիկության խթանումը և ինստիտուտների ամրապնդումը կարևոր նշանակություն ունեն հետագա հակամարտություններից խուսափելու և խաղաղությունը պահպանելու համար:

Թերևս նաև դա է պատճառը, որ գնալով ավելի հրատապ ու առաջնային են դառնում կոռուպցիան չափելու և գնահատելու, միջերկրային և միջժամանակային համեմատություններ կատարելու խնդիրները: Դրանցով զբաղվում են ինչպես տարբեր երկրների մասնագիտացված կառույցներ և ակադեմիական հաստատություններ, այնպես էլ միջազգային տարբեր հեղինակավոր կազմակերպություններ: Առավել հայտնի է «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» միջազգային կազմակերպության կողմից 1995 թվականից ի վեր հրապարակվող «Կոռուպցիայի ընկալման ինդեքս» ամենամյա զեկույցների շարքը: Դրանցում հաշվարկվում է պետական հատվածում կոռուպցիայի ընկալման ինդեքսը (այսուհետ՝ ԿԸԻ) ինչպես համաշխարհային, այնպես էլ առանձին երկրների մակարդակով: Բացի այդ, ԿԸԻ-ն նաև հնարավորություն է տալիս իրականացնելու միջժամանակային և միջերկրային համեմատություններ:

«Թրանսփարենսի Ինթերնեյշնլի» հերթական «Կոռուպցիայի ընկալման ինդեքս – 2022» զեկույցում[1] (այսուհետ՝ Զեկույց) դիտարկվել են աշխարհի 180 երկրներ: Օգտագործվել են 13 արտաքին աղբյուրների (այդ թվում՝ Համաշխարհային բանկի, Համաշխարհային տնտեսական ֆորումի, ռիսկեր գնահատող և խորհրդատվական մասնավոր ընկերությունների, հետազոտական

[1] Զեկույցը հասանելի է հետևյալ հղումով՝ https://images.transparencycdn.org/.../Report_CPI2022....pdf:

կենտրոնների և այլն) տվյալներ: Գնահատականներն արտացոլում են փորձագետների և գործարարների ընկալումները:

Անժխտելի է այն հանգամանքը, որ ԿԸԻ-ն այն ինդիկատորներից մեկն է, որոնց մշտադիտարկումը կարևոր է ինչպես իշխանության, այնպես էլ գործարարների ու տնային տնտեսությունների համար:

Զեկույցը բազմիցս անդրադառնում է ռուս-ուկրաինական հակամարտությանը: Ռուսաստանի հարձակումը այլ պատճառների թվում կապվում է նաև կոռուպցիայի հետ: Նշվում է, որ կոռուպցիան և հակամարտությունները սովորաբար սնում են միմյանց և սպառնում կայուն խաղաղությանը: Մի կողմից՝ հակամարտությունը նպաստում է կոռուպցիայի աճին, քանի որ քաղաքական անկայունությունը, ռեսուրսների վրա ճնշումների ավելացումը և վերահսկողության թուլացած մեխանիզմները հնարավորություններ են ստեղծում կոռուպցիոն հանցագործությունների համար (որպես ասվածի ապացույց՝ նշվում է, որ ցածր ԿԸԻ ունեցող երկրների մեծ մասը կա՛մ ներկայումս հակամարտության մեջ է, կա՛մ վերջերս է ներգրավված եղել: Մյուս կողմից՝ նույնիսկ խաղաղ հասարակություններում կոռուպցիան և անպատժելիությունը կարող են հանգեցնել սոցիալական դժգոհությունների, որոնք, ի վերջո, կարող են վերածվել բռնության:

Համաձայն Զեկույցի՝ 2022թ. արդյունքները վկայում են ամբողջ աշխարհում կոռուպցիայի դեմ պայքարի առումով շարունակվող լճացման մասին:

Ըստ Զեկույցի՝ COVID-19-ի համավարակի շարունակական ազդեցությունը, անկայուն անվտանգային միջավայրը և նվազող ժողովրդավարությունը բացասաբար են ազդել տարբեր տարածաշրջանների երկրների վրա:

Նկատի ունենալով հիմնախնդրի կարևորությունը՝ «Լույս» հիմնադրամը շարունակում է Կոռուպցիայի ընկալման ինդեքսի վերլուծությունների շարքը[2]: Սույն վերլուծության առաջին մասում հակիրճ նկարագրվել է կոռուպցիայի ընկալման ինդեքսը և դրա հաշվարկման մեթոդաբանությունը: Այնուհետև ներկայացվել են Զեկույցի՝ աշխարհին վերաբերող առավել հետաքրքրական մասերը: Վերլուծության երրորդ բաժինը նվիրված է ըստ Զեկույցի՝ Հայաստանում կոռուպցիայի ընկալման շուրջ ձևավորված գնահատականներին: Հաջորդ բաժնում

[2] «Լույս» հիմնադրամի կողմից Կոռուպցիայի ընկալման ինդեքսի վերաբերյալ իրականացված նախկին վերլուծություններին կարելի է ծանոթանալ հետևյալ հղումներով՝

- «Կոռուպցիայի ընկալման ինդեքս – 2018»՝ https://www.luys.am/...pid=80,
- «Կոռուպցիայի ընկալման ինդեքս – 2019»՝ https://www.luys.am/...pid=134,
- «Կոռուպցիայի ընկալման ինդեքս – 2020»՝ https://www.luys.am/...pid=212,
- «Կոռուպցիայի ընկալման ինդեքս – 2021»՝ https://www.luys.am/...pid=283:

կատարվել են Հայաստանի և որոշ երկրների տարածաշրջանային համադրումներ: Վերջում ներկայացվել է վերլուծության ամփոփումը:

1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«Թրանսփարենսի Ինթերնեյշնլը» իր մեթոդաբանությամբ հաշվում է երկրի պետական հատվածում առկա կոռուպցիայի ընկալման աստիճանը՝ հաշվի առնելով գործարարների և փորձագետների շրջանում կոռուպցիայի ընկալումների ներկայացված գնահատականները: Ինդեքսի հաշվարկման՝ կիրառվող մեթոդաբանությունը թույլ է տալիս հնարավորինս նվազեցնել գնահատման սխալանքի չափը: Ավելին, ինդեքսի հաշվարկման մեթոդաբանության 2012 թվականին կատարված վերանայումը հնարավորություն է ընձեռում իրականացնելու ինչպես միջերկրային, այնպես էլ միջժամանակային համեմատություններ:

ԿԸԻ-ին արժեքներ է ընդունում 0-ից 100 միջակայքից: Որքան բարձր է ինդեքսի ընդունած արժեքը, այնքան բարենպաստ է իրավիճակը կոռուպցիայի ընկալման շրջանակում:

Ինդեքսը հաշվարկվում է քայլերի հետևյալ հաջորդականությամբ:

1. Տվյալների աղբյուրների ընտրություն

Օգտագործվող աղբյուրները ներառում են տեղեկատվություն կոռուպցիայի տարբեր դրսևորումների վերաբերյալ (կաշառակերություն, հանրային միջոցների մսխում, բյուրոկրատական քաշքշուկ, հովանավորչություն, ավելորդ ընթացակարգեր և այլ այնպիսի հանգամանքներ, որոնք կարող են հանգեցնել կոռուպցիոն դրսևորումների):

ԿԸԻ – 2022-ը հիմնվում է 12 հաստատությունների 13 տվյալների աղբյուրների գնահատականների վրա[3]՝

1. AFDB - Աֆրիկյան զարգացման բանկի 2020թ. Երկրի քաղաքականության և ինստիտուցիոնալ գնահատում,
2. BF (SGI) - Բերթելսմանի հիմնադրամի կայուն կառավարման 2022թ. ցուցանիշներ,
3. BF (TI)* - Բերթելսմանի հիմնադրամի 2022թ. տրանսֆորմացիոն համաթիվ,

[3] https://www.transparency.it/images/cpi2022/CPI2022_SourceDescription.pdf (այցելվել է 06.02.2023թ.):
* Աստղանիշով ներկայացված են այն 6 աղբյուրները, որոնք օգտագործվել են Հայաստանի 2022թ. ԿԸԻ-ի հաշվարկման համար:

4. EIU - «Էկոնոմիստ Ինթելիջենս Յունիթ» («Էկոնոմիստ» թերթի հետազոտական բաժնի) Երկրի ռիսկայնության 2022թ. վարկանիշ,
5. FH* - Ֆրիդոմ Հաուսի Անցումային փուլում գտնվող երկրներ 2022թ,
6. GI* - Գլոբալ Ինսայթի Երկրի ռիսկայնության 2021թ. վարկանիշ,
7. IMD - Մենեջմենթի զարգացման ինստիտուտի Համաշխարհային մրցունակության 2022թ. տարեգրքի Գործադիր ղեկավարների կարծիքի հարցում,
8. PERC - Քաղաքական և տնտեսական ռիսկի խորհրդատվության Ասիական հետազոտական-վերլուծական 2022թ. տեղեկագիր,
9. PRS* - “Political Risks Services International”-ի Երկրի ռիսկայնության 2022թ. ուղեցույց,
10. VDEM* - Ժողովրդավարության բազմազանության 2022թ. ծրագիր,
11. WB - Համաշխարհային բանկի Երկրի հանրային քաղաքականության և ինստիտուցիոնալ համակարգի 2021թ. գնահատում,
12. WEF* - Համաշխարհային տնտեսական ֆորումի Ընկերությունների գործադիր տնօրենների կարծիքի 2021թ.ամենամյա հարցում,
13. WJP- Արդարության համաշխարհային ծրագրի Օրենքի գերակայության համաթվի 2021թ. փորձագիտական հարցում:

2. Ստացված տվյալների (ենթաինդեքսների) ստանդարտացում

Ստանդարտացումը կատարվում է 0-ից 100 միջակայքում՝ տվյալների նորմավորման միջոցով: Մասնավորապես, յուրաքանչյուր տվյալից հանվում է վիճակագրական շարքի միջին թվաբանականը, և արդյունքը հարաբերվում է վիճակագրական շարքի ստանդարտ շեղմանը: Նորմավորումն իրականացվում է այն նպատակով, որպեսզի ապահովվի տարբեր տարիների ԿԸԻ-ների համադրելիությունը: Այս ընթացակարգից հետո ստանդարտացված միավորները փոխակերպվում են ԿԸԻ սանդղակի՝ դրանք բազմապատկելով 2012թ. ԿԸԻ ստանդարտ շեղման արժեքով (20) և գումարելով 2012 թվականին ԿԸԻ-ի միջինը (45), որպեսզի տվյալների հավաքածուն համապատասխանի 0-100 սանդղակին:

3. ԿԸԻ-ի հաշվարկ՝ որպես ենթաինդեքսների միջին

Տվյալ երկրի ԿԸԻ-ն հաշվարկելու համար անհրաժեշտ պայման է առնվազն 3 աղբյուրից ստացված գնահատականի (ենթաինդեքսի) առկայությունը: Երկրի ԿԸԻ-ն հաշվարկվում է որպես այդ երկրի համար հասանելի բոլոր ստանդարտացված ենթաինդեքսների միջին թվաբանական: Ինդեքսի միավորները կլորացվում են ամբողջ թվերի:

4. ԿԸԻ-ի անորոշության աստիճանի հաշվարկ

Յուրաքանչյուր երկրի ԿԸԻ-ի համար հաշվարկվում է դրա ստանդարտ սխալի չափը և վստահության միջակայքը: Որքան փոքր է ստանդարտ սխալի չափը, այնքան ավելի «նեղ» է ստացվում վստահության միջակայքը (այսինքն՝ ավելի բարձր է պետական հատվածում կոռուպցիայի դրսևորումների վերաբերյալ ընկալումների որոշակիությունը):

ԿԸԻ ցուցանիշի բարելավման և ժամանակի պահանջներին համահունչ դարձնելու համար դրա հաշվարկման գործընթացը պարբերաբար վերանայվում է (վերջին անգամ՝ 2017 թվականին՝ Եվրոպական հանձնաժողովի համատեղ հետազոտական կենտրոնի կողմից): Այնուամենայնիվ, 2012 թվականից ի վեր բոլոր տարիների ԿԸԻ ցուցանիշները համադրելի են միմյանց հետ:

2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՈՒՄՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ԿԸԻ 2022թ. Զեկույցի համաձայն՝ դիտարկվող 180 երկրներում համավարակի, կլիմայի փոփոխության և անվտանգային սպառնալիքների պատճառով կտրուկ ավելացած անորոշությունը նպաստել է կոռուպցիոն ռիսկերի ավելացմանը և ժողովրդավարության անկմանը: Այս տարվա վերլուծությունները վկայում են, որ 124 երկրներում ԿԸԻ-ին անփոփոխ է, մինչդեռ անկում գրանցած երկրների թիվը գնալով աճում է: Գլոբալ խաղաղությունը վտանգված է, և կոռուպցիան մի կողմից դրա հիմնական պատճառն է, մյուս կողմից՝ հիմնական հետևանքը:

Գծապատկեր 1. 2012-2022թթ. ընթացքում ԿԸԻ-ի փոփոխությունները, երկիր



Համաձայն Զեկույցի՝ կոռուպցիայի համաշխարհային մակարդակը բարձր է. գլոբալ ԿԸԻ-ն տասնմեկերորդ տարին անընդմեջ մնում է անփոփոխ՝ 43 միավոր: Ընդ որում, երկրների ավելի քան երկու երրորդի (68 տոկոս) ԿԸԻ-ն 50-ից ցածր է: Մինչդեռ, **ըստ հակակոռուպցիոն փորձագետների, այն երկրներում, որոնցում**

ԿԸԻ-ն 50 միավորից ցածր է, կոռուպցիան առավել հաճախ է հանդիսանում լուրջ հիմնահարց:

Որպես կանոն, արդյունավետ գործող ժողովրդավարական ինստիտուտներ ունեցող երկրները մշտապես զբաղեցնում են վարկանիշային աղյուսակի վերին հորիզոնականները: 2022թ. վարկանիշային աղյուսակը գլխավորում է Դանիան՝ 90 միավորով, որին 87-ական միավորով հաջորդում են Ֆինլանդիան և Նոր Զելանդիան:

Միևնույն ժամանակ, այն երկրներում, որոնք ներքաշված են հակամարտություններում կամ որոնցում հիմնական անձնական և քաղաքական ազատությունները խիստ սահմանափակված են, արձանագրվում են ԿԸԻ-ի ամենացածր արժեքները: 2022թ. Զեկույցում ըստ ԿԸԻ-ի վերջին տեղերում են Հարավային Սուդանը (13 միավոր), Սիրիան (13 միավոր) և Սոմալին (12 միավոր):

Անցած հինգ տարիների ընթացքում միայն 8 երկրների ԿԸԻ-ն է զգալիորեն բարելավվել: Մինչդեռ, 10 երկրներում էական անկում է արձանագրվել: Մնացած երկրներում (երկրների 90 տոկոսում) ԿԸԻ-ն անփոփոխ է մնացել:

Զեկույցում նշվում է, որ կոռուպցիան հիմնարար սպառնալիք է խաղաղության և անվտանգության համար: Այն նոր դժգոհություններ է առաջացնում հասարակության մեջ կամ ուժեղացնում գոյություն ունեցողները՝ խարխլելով պաշտպանության և անվտանգության ինստիտուտները և քայքայելով պետական իշխանության լեգիտիմությունը: Նշվում է, որ 2017 թվականից ի վեր 130 երկրներում լուրջ սոցիալական ցնցումներ են գրանցվել: Դրանցից 55-ում (42 տոկոսում) բողոքի ակցիաներից առնվազն մեկը պայմանավորված է եղել կառավարության կոռումպացվածությունից ժողովրդի դժգոհությամբ: Ընդ որում, կոռուպցիայի հետ կապված բողոքի ակցիաների 80 տոկոսը և ցուցարարների դեմ փաստագրված բռնի արձագանքների 82 տոկոսը տեղի է ունեցել այն երկրներում, որտեղ ԿԸԻ-ն 50 միավորից ցածր է:

Ըստ Զեկույցի՝ ամենաբարձր ԿԸԻ-ն ունի «Արևմտյան Եվրոպա և Եվրամիություն» տարածաշրջանը (66 միավոր, որը, սակայն, ավելի քան մեկ տասնամյակ մնում է անփոփոխ):

3. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2022թ. Հայաստանի ԿԸԻ-ն 46 միավոր է և նախորդ տարվա համեմատ նվազել է 3 միավորով (ի դեպ, 2020-ին նույնպես 49 միավոր էր): Ընդ որում, ԿԸԻ չափման ստանդարտ սխալը 2022-ին 2021-ի համեմատ նվազել է 1.29-ով և կազմել 2.47: Դա վկայում է այն մասին, որ խիստ դրական և խիստ բացասական գնահատականների շեղումը միջինից՝ ԿԸԻ-ից նվազել է, այսինքն՝ դիտարկված ընկալումներն ավելի «միանման» են դարձել:

Ինչպես նշվում է «Թրանսփարենսի Ինթերնեյշնլի» Արևելյան Եվրոպայի և Միջին Ասիայի տարածաշրջանի վերաբերյալ վերլուծության մեջ. «Մի քանի տարի առաջընթաց գրանցելուց հետո, 2022-ին Հայաստանի ԿԸԻ-ն երեք միավորով նվազել է, ինչն անհանգստացնող է: Թեև այս նահանջը վիճակագրորեն նշանակալի չէ, սակայն, պետք է նշել, որ այն արտացոլում է զսպումների և հակակշիռների պահպանման, իրավապահ մարմինների բարեվարքության, դատական համակարգի անկախության ապահովման և քաղաքացիական տարածքի պաշտպանության հարցերում առկա հետընթացը»[4]:

Հայաստանն ունի 46 միավոր, և դա այն դեպքում, երբ կոռուպցիայի ինդեքսի 50-ից ցածր լինելը սովորաբար վկայում է տվյալ պետության լուրջ խնդիրների (մասնավորապես՝ համակարգային կոռուպցիայի մասին):

Գծապատկեր 2. ԿԸԻ-ն Հայաստանում և ՀՀ դիրքն ըստ ԿԸԻ-ի, 2012-2022թթ.



ԿԸԻ-ի արժեքով Հայաստանի դիրքը 2022թ.՝ 180 երկիր ներառող վարկանիշային աղյուսակում վատթարացել է 5 հորիզոնականով, և ներկայումս

[4] https://images.transparencycdn.org/images/CPI-2022-Eastern-Europe-Central-Asia-regional-analysis-1.pdf (այցելվել է 06.02.2023թ.):

մեր երկիրը զբաղեցնում է 63-րդ հորիզոնականը (2021-ի՝ 58-րդ հորիզոնականի փոխարեն):

Ինչպես նախորդ երեք տարիներին, 2022 թվականին ևս Հայաստանի ԿԸԻ-ն ավելի բարձր է համաշխարհային միջին արժեքից (որը, ինչպես և անցյալ տարի, հավասար է 43-ի): **Միևնույն ժամանակ, այն ցածր է ԿԸԻ-ի այն շեմային արժեքից (50), որից ցածր ԿԸԻ ունեցող երկրներում, համաձայն հակակոռուպցիոն փորձագետների, կոռուպցիան առավել հաճախ է հանդիսանում լուրջ հիմնահարց:**

Հայաստանի ԿԸԻ-ն ձևավորող վեց ենթաինդեքսներից չորսը չեն փոխվել, իսկ երկուսի մասով արձանագրվել է հետընթաց: **2022-ին 2021-ի համեմատ 4 միավորով նվազել է VDEM (Ժողովրդավարության բազմազանության ծրագիր) ենթաինդեքսը (այն 2021-ին ևս նվազել էր 4 միավորով):** Նշենք, որ **այս ենթաինդեքսի մասով գրանցված հետընթացը հատկապես մտահոգիչ է, քանի որ այն վերաբերում է ժողովրդավարական արժեքների և քաղաքացիական հասարակության ակտիվության ասպարեզում երկրի առաջընթացին և արտացոլում է իշխանության տարբեր ճյուղերում (գործադիր, օրենսդիր և դատական) քաղաքական կոռուպցիայի առկայությունը: Ավելի լուրջ բացասական զարգացումների մասին է վկայում WEF EOS (Համաշխարհային տնտեսական ֆորումի Ընկերությունների գործադիր տնօրենների կարծիքի ամենամյա հարցում) ենթաինդեքսի 13 միավորով նվազումը:** Հիշեցնենք, որ WEF EOS-ը, ի թիվս այլ խնդիրների, արտահայտում է տնտեսական ինստիտուտների, բիզնես միջավայրի, մակրոտնտեսական միջավայրի, տեխնոլոգիական առաջընթացի, ենթակառուցվածքների և նմանատիպ այլ համակարգերի վիճակը: Կարելի է ասել, որ ենթաինդեքսը 2016-2021թթ. շարունակական աճին հաջորդած 2022թ. շեշտակի անկումից հետո կրկին գրեթե համադրելի է 2018-ի արժեքի հետ:

Աղյուսակ 1. ԿԸԻ-ի բաղադրիչները ՀՀ-ում, 2016-2022թթ.

Տարի/Ցուցանիշ	Կոռուպցիայի ընկալման ինդեքս		BF (TI)	FH	GI	PRS	VDEM	WEF EOS
	Դիրք	Ինդեքս						
2016	113	33	28	41	34	32	17	45
2017	107	35	33	42	35	32	20	47
2018	105	35	33	39	35	32	21	51
2019	77	42	45	39	47	32	32	60
2020	60	49	45	44	47	32	63	60
2021	58	49	45	44	47	32	59	66
2022	63	46	45	44	47	32	55	53

Ծանոթագրություն. Աղյուսակում ներկայացված հապավումներն ունեն հետևյալ բովանդակությունը. BF (TI)՝ Bertelsmann Foundation Transformation Index, FH՝ Freedom House Nations in Transit, GI՝ Global Insights

Country Risk Ratings, PRS՝ Political Risks Services International Country Risk Guide, VDEM՝ Varieties of Democracy Project, WEF EOS՝ World Economic Forum Executive Opinion Survey:

Հայաստանի ԿԸԻ-ի նվազումն իսկապես խնդրահարույց է, քանի որ դա վերաբերում է կոռուպցիայի ընկալմանը, իսկ դրա նվազումը վկայում է այն մասին, որ, չնայած կոռուպցիայի նկատմամբ զրո հանդուրժողականության մասին իշխանությունների մշտապես արվող հայտարարություններին, հասարակության կարծիքով, այս իմաստով վիճակն ավելի է վատթարացել:

Ըստ էության, «**Հայաստանում տարվող հակակոռուպցիոն պայքարը իրականացվում է զուտ բաց տեքստերի և աննշան ընթացակարգային փոփոխությունների միջոցով՝ դրանք ոգևորիչ կերպով ներկայացվելով որպես ձեռքբերումներ**»:[5]

Կառավարությունը պետք է ավելի բաց լինի՝ հանրությանը որոշումների կայացման գործընթացում ներգրավելու առումով՝ սկսած ակտիվիստներից և գործարարներից մինչև մարգինալացված խմբերը և երիտասարդությունը:

4. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

2022թ. Զեկույցի համաձայն՝ «Արևմտյան Եվրոպա և Եվրոպական միություն» տարածաշրջանը 66 միավորով շարունակում է գլխավորել ԿԸԻ աղյուսակը, սակայն տարածաշրջանի երկրների մեծ մասում ավելի քան մեկ տասնամյակ առաջընթաց չի գրանցվում: Անդրսահարյան Աֆրիկայի տարածաշրջանը 32 միավորով շարունակում է զբաղեցնել վատագույն դիրքը: Գծապատկեր 3-ում ներկայացված են աշխարհի 6 տարածաշրջաններում 2022 թվականին գրանցված ԿԸԻ-ի միջին գնահատականները և Հայաստանի միավորը:

[5] https://news.am/arm/news/742672.html (այցելվել է 06.02.2023թ.):

Գծապատկեր 3. ԿԸԻ-ի արժեքները ՀՀ-ում և աշխարհի տարբեր տարածաշրջաններում, 2022թ.



Չնայած բավական էական նվազմանը՝ Հայաստանի ԿԸԻ-ն գերազանցում է իր խմբի՝ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի միջին գնահատականին:

Զեկույցում նշվում է, որ Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում բարձր մակարդակի կոռուպցիան սերտորեն կապված է քաղաքական անկայունության, թուլացած ինստիտուտների, իսկ որոշ դեպքերում՝ զինված հակամարտությունների հետ: Գծապատկեր 3-ից երևում է, որ մեր տարածաշրջանն ունի երկրորդ ամենացածր ԿԸԻ-ն (35), որը նախորդ տարվա համեմատ նվազել է 1 միավորով:

«Արևելյան Եվրոպա և Կենտրոնական Ասիա» տարածաշրջանի երկրների 2022-ի լավագույն եռյակում են Վրաստանը (56 միավոր), Հայաստանը (46 միավոր) և Մոնտենեգրոն (45 միավոր)՝ համաշխարհային վարկանիշային աղյուսակում զբաղեցնելով համապատասխանաբար 41-րդ, 63-րդ և 65-րդ հորիզոնականները: Ընդ որում, բացի այս երկրներից, տարածաշրջանի որևէ այլ երկրի ԿԸԻ-ն չի գերազանցում համաշխարհային միջինին (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. ԿԸԻ-ի արժեքները ՀՀ-ում և Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի երկրներում, 2021-2022թթ.

Երկիր	ԿԸԻ 2022	ԿԸԻ 2021	Փոփոխություն	Դիրք 2022	Դիրք 2021	Փոփոխություն
Վրաստան	**56**	**55**	↑ 1	41	45	↑ -4
Հայաստան	**46**	**49**	↓ -3	63	58	↓ 5
Մոնտենեգրո	**45**	**46**	↓ -1	65	64	↓ 1
Կոսովո	**41**	**39**	↑ 2	84	87	↑ -3
Հյուսիսային Մակեդոնիա	**40**	**39**	↑ 1	85	87	↑ -2
Բելառուս	**39**	**41**	↓ -2	91	82	↓ 9
Մոլդովա	**39**	**36**	↑ 3	91	105	↑ -14
Սերբիա	**36**	**38**	↓ -2	101	96	↓ 5
Թուրքիա	**36**	**38**	↓ -2	101	96	↓ 5
Ղազախստան	**36**	**37**	↓ -1	101	102	↑ -1
Ալբանիա	**36**	**35**	↑ 1	101	110	↑ -9
Բոսնիա և Հերցեգովինա	**34**	**35**	↓ -1	110	110	— 0
Ուկրաինա	**33**	**32**	↑ 1	116	122	↑ -6
Ուզբեկստան	**31**	**28**	↑ 3	126	140	↑ -14
Ռուսաստան	**28**	**29**	↓ -1	137	136	↓ 1
Ղրղզստան	**27**	**27**	— 0	140	144	↑ -4
Տաջիկստան	**24**	**25**	↓ -1	150	150	— 0
Ադրբեջան	**23**	**30**	↓ -7	157	128	↓ 29
Թուրքմենստան	**19**	**19**	— 0	167	169	↑ -2

Ինչպես երևում է աղյուսակից, տարածաշրջանի 19 երկրների շարքում Հայաստանը զբաղեցնում է 2-րդ տեղը: Տարածաշրջանում Հայաստանը զիջում է միայն հարևան Վրաստանին:

Խմբում վատագույն արդյունքները գրանցել են Տաջիկստանը (24 միավոր), Ադրբեջանը (23 միավոր) և Թուրքմենստանը (19 միավոր)՝ 180 երկրների շարքում զբաղեցնելով համապատասխանաբար 150-րդ, 157-րդ և 167-րդ հորիզոնականները: 2021-ի համեմատ 2022-ին ԿԸԻ-ի ամենամեծ բարելավումը տարածաշրջանում ունեցել են Մոլդովան և Ուզբեկստանը (3-ական միավորով), իսկ ամենամեծ նվազումը գրանցել է Ադրբեջանը (7 միավորով): Վարկանիշային աղյուսակում զբաղեցրած դիրքի փոփոխության առումով ևս լավագույն և վատագույն արդյունքներ գրանցած երկրները նույնն են՝ Մոլդովան և Ուզբեկստանը՝ 14 հորիզոնականով առաջընթաց, իսկ Ադրբեջանը՝ 29 հորիզոնականով հետընթաց: Սերբիան (36 միավոր), Թուրքիան (36 միավոր), Բոսնիա և Հերցեգովինան (34 միավոր) և Ադրբեջանը (23 միավոր) այս տարվա ԿԸԻ-ով իրենց պատմական նվազագույն մակարդակի վրա են:

Հայաստանը ԿԸԻ-ով գերազանցում է ԵԱՏՄ մյուս բոլոր անդամ երկրներին (Բելառուս՝ 39 միավոր, Ղազախստան՝ 36 միավոր, Ռուսաստան՝ 28 միավոր և Ղրղզստան՝ 27 միավոր): Մեր հարևաններից Թուրքիան 101- րդ տեղում է, Իրանը՝ 147- րդում, իսկ Ադրբեջանը՝ 157-րդում (Գծապատկեր 4):

Գծապատկեր 4. Կոռուպցիայի ընկալումը ՀՀ-ում և հարևան երկրներում, 2020-2022թթ.



Գծապատկերից երևում է, որ Հայաստանի հարևան երկրներից 2021 թվականի համեմատ ԿԸԻ-ն աճել է միայն Վրաստանում, իսկ վարկանիշային աղյուսակում, Վրաստանից բացի, իր դիրքը բարելավել է նաև Իրանը (թեևայդ երկրի ԿԸԻ-ն մնացել է անփոփոխ): **Կտրուկ նվազել է Ադրբեջանի ԿԸԻ-ն (7 միավորով), իսկ վարկանիշային աղյուսակում նրա դիրքը վատթարացել է 29 հորիզոնականով:**

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով «Կոռուպցիայի ընկալման ինդեքս – 2022» զեկույցի ուսումնասիրությունը, առանձնացնենք հետևյալը.

- **2022թ. կոռուպցիայի ընկալման ինդեքսով Հայաստանը 5 հորիզոնականով զիջել է իր դիրքը 180 երկրների շարքում, վարկանիշային աղյուսակում զբաղեցնելով 63-րդ տեղը՝ նախորդ տարվա 58-րդի փոխարեն: Հայաստանի 2022թ. ԿԸԻ-ն 46 միավոր է և նախորդ տարվա համեմատ նվազել է 3 միավորով: Այս նվազումն արտացոլում է զսպումների և հակակշիռների պահպանման, իրավապահ մարմինների բարեվարքության, դատական համակարգի անկախության ապահովման**

և քաղաքացիական տարածքի պաշտպանության հարցերում առկա հետընթացը: Կասկածելի պետական գնումները, վիճահարույց նշանակումները և այլ գործողությունները հանրության շրջանում թերահավատություն են առաջացնում, ինչը հանգեցնում է Կոռուպցիայի ընկալման ինդեքսի նվազման:

- **Մտահոգիչ է Հայաստանի ԿԸԻ-ի ենթաինդեքսներից՝ WEF EOS-ի (Համաշխարհային տնտեսական ֆորումի Ընկերությունների գործադիր տնօրենների կարծիքի ամենամյա հարցում) 13 միավորով նվազումը: Այս ենթաինդեքսը, ի թիվս այլ խնդիրների, վերաբերում է տնտեսական ինստիտուտների, բիզնես միջավայրի, մակրոտնտեսական միջավայրի, տեխնոլոգիական առաջընթացի, ենթակառուցվածքների և նմանատիպ այլ համակարգերի վիճակին: Ըստ էության, ենթաինդեքսի երեք տարվա (2019-2021 թվականներին) աճը «չեզոքացվել» է մեկ տարում, և, այդ պատճառով, ենթաինդեքսի 2022թ. արժեքը կրկին գրեթե համադրելի է 2018-ի արժեքի հետ:**

- **Լուրջ մտահոգության տեղիք է տալիս նաև այն, որ 2022-ին 2021-ի համեմատ 4 միավորով նվազել է ԿԸԻ-ի ենթաինդեքսներից VDEM-ը (Ժողովրդավարության բազմազանության ծրագիր), այն 2021-ին ևս նվազել էր 4 միավորով: Հետընթացը հատկապես մտահոգիչ է, քանի որ այս ենթաինդեքսը վերաբերում է ժողովրդավարական արժեքների և քաղաքացիական հասարակության ակտիվության ասպարեզում երկրի առաջընթացին և արտացոլում է իշխանության տարբեր ճյուղերում (գործադիր, օրենսդիր և դատական) քաղաքական կոռուպցիայի առկայությունը:**

- Ըստ ԿԸԻ-ի վարկանիշային աղյուսակի՝ առաջին եռյակում են Դանիան (90 միավոր), Ֆինլանդիան (87 միավոր) և Նոր Զելանդիան (87 միավոր): Վերջին երեք տեղերում են Հարավային Սուդանը (13 միավոր), Սիրիան (13 միավոր) և Սոմալին (12 միավոր):

- «Արևելյան Եվրոպա և Կենտրոնական Ասիա» տարածաշրջանի երկրների 2022-ի լավագույն եռյակում են Վրաստանը (56 միավոր), Հայաստանը (46 միավոր) և Մոնտենեգրոն (45 միավոր)՝ համաշխարհային վարկանիշային աղյուսակում զբաղեցնելով համապատասխանաբար 41-րդ, 63-րդ և 65-րդ հորիզոնականները: Խմբում վատագույն արդյունքները գրանցել են Տաջիկստանը (24 միավոր), Ադրբեջանը (23 միավոր) և Թուրքմենստանը (19 միավոր)՝ 180 երկրների շարքում զբաղեցնելով համապատասխանաբար 150-րդ, 157-րդ և 167-րդ հորիզոնականները:

- Հայաստանը ԿԸԻ-ով գերազանցում է ԵԱՏՄ մյուս բոլոր անդամ երկրներին (Բելառուս՝ 39 միավոր, Ղազախստան՝ 36 միավոր, Ռուսաստան՝ 28 միավոր և Ղրղզստան՝ 27 միավոր):
- Հայաստանի հարևան երկրներից Թուրքիան 101-րդ տեղում է, Իրանը՝ 147- րդում, իսկ Ադրբեջանը՝ 157-րդում:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*